Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

Գեոդեզիայի բնագավառում Սպիտակի տարածաշրջանի գեոդինամիկական պոլիգոնի ստեղծման աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր N «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/02»

ք. Երևան «02» փետրվարի 2015թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վ. Հասրաթյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ը, ի դեմս Կազմակերպության գործադիր տնօրեն Վ. Կարագյոզյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գեոդեզիայի բնագավառում Սպիտակի տարածաշրջանի գեոդինամիկական պոլիգոնի ստեղծման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների՝

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը.

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին՝

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

2.4 Կատարողը պարտավոր է՝

2 4 1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ·

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5 3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը.

2.4 3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ

Կատարողը Աշխատանքի կատարման ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 4 օրինակ (Հավելված N 3):

3 2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ.

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10-օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը·

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4 1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 68965400 (վաթսունութ միլիոն ինը հարյուր վաթսունհինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն· Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4 2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա N 2 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015թ դեկտեմբերի 25-ը.

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով.

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

5 4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով.

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7 1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը

7 2 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը·

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

2) սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի. Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր.

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման·

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա. Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը.

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում·

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները /6 էջ/ հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ·

7 7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության. Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության.

7 8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ա տ վ ի ր ա տ ու	**Կ ա տ ա ր ո ղ**
ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե	«Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ
Հասցեն՝ ք.Երևան, Էրեբունու 7	ք. Երևան, Կոմիտաս 35/2
h/h 900013220042	«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/6
ՀՀ ՖՆ գանձապետական վարչություն	Հ/Հ 247120034787
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 00113126
Աշխատակազմի	Գործադիր տնօրեն՝
ղեկավար՝ Հ. Հասրաթյան	Վ. Կարագյոզյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ Տ

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

Հավելված 1
N «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸՀՀԱՇՁԲ-15/02»
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
Գեոդեզիայի բնագավառում Սպիտակի տարածաշրջանի գեոդինամիկական պոլիգոնի ստեղծման աշխատանքների

1. Ընդհանուր դրույթներ

Հայաստանի տարածքը գտնվում է Արաբական և Եվրասիական պլատֆորմների շփման գոտում, ընդորում, արբանյակային դիտարկումների տվյալներով (ԱՄՆ) Արաբական պլատֆորմը շարժվում է Եվրասիական պլատֆորմի նկատմամբ դեպի հյուսիս-արևմուտք 28+3մմ / տարի արագությամբ:

Այդ շարժման պատճառով տեղի է ունենում երկրակեղևի մշտական դեֆորմացիա Արաբական և Եվրասիական պլատֆորմների գոտում ընդհանրապես և Հայաստանում մասնավորապես· Առաջին բարձր ճշտությամբ տվյալները Հայաստանի և հարակից տարածքների երկրակեղևի դեֆորմացիաների վերաբերյալ ստացվել են 1997թ. համատեղ ԱՄՆ Մասաչուսետսի տեխնոլոգիական ինստիտուտի, Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության (ՍՊԱԾ) և Ռուսաստանի Դաշնության Գիտությունների Ակադեմիայի Երկրաֆիզիկայի ինստիտուտի կողմից:

Ապարների խտությունից կախված դեֆորմացիաները տարբեր մասերում տարբեր են և սահմանային դեֆորմացիաներին հասնելու արագությունները նույնպես տարբեր են· Երկրակեղևի առավելագույն դեֆորմացված մասերը նրա ամենաթույլ գոտիներն են, այսինքն խզվածքները. Ըստ սեյսմիկ իրադարձությունների համաշխարհային վիճակագրության տվյալների ուժգին երկրաշարժերի մեծ մասը տեղի է ունենում ակտիվ խզվածքների երկայնքով·

1988 թ Սպիտակի ավերիչ երկրաշարժը նոր խնդիր դրեց ողջ մարդկության առջև երկրաշարժերը կանխատեսելու վերաբերյալ. Հայաստանը ցնցվեց աղետից, որը մարդկությանը դեռ երկար տարիներ կհիշեցնի, որ աշխարհի բոլոր երկրների կառավարությունները պետք է լուրջ միջոցներ ձեռնարկեն երկրաշարժերի կանխատեսման, իսկ հետագայում նաև կանխարգելման ուղղությամբ·

Երկրակեղևի ուղղաձիգ շարժումներն ուսումնասիրելու նպատակով նախատեսվում է իրականացնել GPS արբանյակային գեոդեզիական ցանցի հիմնակետերի և I դասի նիվելիրացման աշխատանքներ, ինչը հնարավորություն կտա նաև թարմացնել նախկինում կատարված նիվելիրացման տվյալներն ու ցանցը պահել արդի վիճակում, ինչպես նաև ստանալ հիմնակետերի բաձարձակ բարձունքային նիշերը, ՀՀ տարածքի համար քվազիգեոիդի մոդելի ճշգրտման նպատակով·

Երկրակեղևի հորիզոնական շարժումներն ուսումնասիրելու նպատակով նախատեսվում է իրականացնել Արբանյակային գեոդեզիական ցանցի նախկինում դիտարկված և նոր տեղադրվող հիմնակետերի դիտարկման աշխատանքներ GPS ընդունիչներով, ինչը հնարավորություն կտա այն նույնպես պահել արդի վիճակում

Սեյսմատեկտոնիկ ակտիվ խզվածքների գոտում նախատեսված համալիր աշխատանքները անհրաժեշտ է իրականացնել պարբերաբար, 3 փուլով՝ տարեկան 1փուլ:

Ներկայացված առաջադրանքը կազմվել է հաշվի առնելով ՀՀ նախագահի 2010 թ օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետության սեյսմիկ անվտանգության համակարգի զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» ՆԿ-140 Ն կարգադրության պահանջները (հայեցակարգի 35-րդ կետ).

2. Աշխատանքների իրականացման նպատակը

Հայաստանի Հանրապետության սեյսմիկ ակտիվ գոտիներում ճշգրիտ գեոդեզիական չափագրումների հիման վրա կարելի է կանխորոշել, թե որտեղ է գտնվելու ապագա երկրաշարժի էպիկենտրոնը, ինչը թույլ կտա ճիշտ տեղադրել երկրաշարժագիտական սարքերն ու համակարգերը. Երկրակեղևի այն մասերում, որտեղ կան կրկնվող նիվելիրային ընթացքներ, ժամանակակից ուղղաձիգ տեղաշարժերի տվյալներով հնարավոր է հայտնաբերել դեֆորմացիաների տարածաշրջանները· Դա նշանակում է, որ անհրաժեշտ է ստեղծել հատուկ գեոդինամիկական պոլիգոններ երկրակեղևի տեղաշարժերի ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով:

Սպիտակի տարածաշրջանի խզվածքի գոտում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել բարձր ճշգրտության առաջին դասի նիվելիրացման և արբանյակային GPS կայաններով դիտարկման

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

աշխատանքներ: Աշխատանքների հիմնական նպատակն է փուլային դիտարկումներից ստացված տվյալների վերլուծության հիման վրա ստանալ երկրակեղևի ուղղաձիգ և հորիզոնական տեղաշարժերի մասին անհրաժեշտ տվյալներ.

2015 թվականին նախատեսվում է իրականացնել I դասի նիվելիրացման և GPS արբանյակային դիրքորոշման կայաններով դիտարկման աշխատանքներ:

3. Աշխատանքների իրականացման միջոցառումները

Դիտարկումների ժամանակ պարտադիր պայման պետք է հանդիսանա տարածաշրջանին մոտ գտնվող մշտական գործող ռեֆերենց կայանների աշխատանքները: Գեոդինամիկական պոլիգոնի տարածքում նախկինում տեղադրված բոլոր հիմնակետերը պետք է դիտարկվեն երկհաճախականի արբանյակային դիրքորոշման կայանների միջոցով: Հիմնակետերի դիտարկման ավարտից հետո հավասարակշռման և կոորդինատների հաշվարկման աշխատանքների գործընթացում անպայման պետք է օգտագործել ՀՀ տարածքում 2014 թվականին ստեղծված մշտական գործող ռեֆերենց կայանների ցանցի տվյալ տարածաշրջանին մոտ գտնվող կայանների չափման տվյալները:

Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է հետևյալը՝

ա) I դասի նիվելիրացման աշխատանքներ,

բ) GPS կետերի դիտարկում, հավասարակշռում և կոորդինատների հաշվարկում,

գ) I դասի նիվելիրացման նյութերի մշակում, կետերի կոորդինատների և բարձունքային նիշերի կատալոգի կազմում,

դ) տեխնիկական հաշվետվության կազմում:

4. Աշխատանքների իրականացումից ակնկալվող արդյունքները

Այս աշխատանքների իրականացման արդյունքում 2015 թվականին նախատեսվում է ունենալ՝

- I դասի 403.4գծ կմ նիվելիրացման մշակման նյութերը և բարձունքային նիշերի կատալոգը թղթային և էլեկտրոնային տարբերակներով,
- խզվածքների տարածքում 2-րդ փուլում 48 GPS հիմնակետերի դիտարկման տվյալները և սխեմաները թղթային տարբերակով և GPS կետերի կոորդինատների և բարձրությունների ցուցակները թղթային և էլեկտրոնային տարբերակներով,
- գրավիմետրական ինը կետերի դիտարկման նյութերը թղթային և էլեկտրոնային տարբերակներով,
- տեխնիկական հաշվետվությունը - թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5. Աշխատանքների իրականացման ֆինանսական ապահովումը և ժամանակացույցը

Սպիտակի տարածաշրջանի գեոդինամիկական պոլիգոնի ստեղծման գեոդեզիական աշխատանքների ծախսերի ամփոփ նախահաշիվը ըստ ծավալների տրված են գնման ժամանակացույցում

Աշխատանքի կատարման ժամկետը	
սկիզբը	ավարտը
Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց	25 12 2015թ.

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

Գնման ժամանակացույց
գեոդեզիայի բնագավառում Սպիտակի տարածաշրջանի գեոդինամիկական պոլիգոնի ստեղծման աշխատանքների

Հ/հ	Աշխատանքի անվանումը	Չափ. միավ.	Ծավալը	Միավորի արժեքը /դրամ/	Գումարը /հազ. դրամ/	1-ին եռամսյակ		2 րդ եռամսյակ		3-րդ եռամսյակ		4-րդ եռամսյակ	
						ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	GPS կետերի դիտարկումներ 2 դասի ծրագրով (3 փուլով)	կետ	48	109887.5	5274.6	8	879 1	20	2197.75	20	2197.75		
2	GPS կետերի դիտարկումներ մշտական գործող բազային կայանի աշխատանքի ընթացքում	կետ	10	17692.5	176 925			10	176.925				
3	GPS կետերի կոորդինատների հավասարակշռում և հաշվարկում	կետ	48	5033 8	241.621	8	40.3	20	100 675	20	100 675		
4	I դասի նիվելիրացում (բարդության գործակից 1.2)	գծ.կմ.	114.7	196544	22543.597			55	10809.92	59.7	11733.677		
5	I դասի նիվելիրացում	գծ.կմ.	118 9	163786.6	19474 227			60.0	9827.196	58.9	9647 031		
6	I դասի նիվելիրացում խզվածքներով (3 փուլով)	գծ կմ.	111 1	163786.6	18196.691			50	8189.33	61.1	10007.361		
7	Գրավիմետրական աշխատանքներ	կետ	9	54000	486 000			9	486.0				
8	I դասի նիվելիրացման նյութերի մշակում և հավասարակշռում	գծ.կմ.	403.4	4720	1904.048					103.4	488.048	300	1416.0
9	Տեխնիկական հաշվետվության կազմում	հաշվ	1	667692	667.692							1	667 7
	Ընդամենը՝				***68965.4***		***919.4***		***31787.8***		***34174.5***		***2083.7***

Պ ա տ վ ի ր ա տ ու

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցեն ք.Երևան, Միշանուցյան 7
h/h 900013220042
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի ղեկավար՝ ______ Վ. Հարությունյան
/ստորագրություն/Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ

«Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ
ք. Երևան, Կոմիտաս 35/2
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/ճ
Հ/Հ 247120034787
ՀՎՀՀ 00113126
Գործադիր տնօրեն՝ ______ Վ. Կարագյոզյան
(ստորագրություն) Կ.Տ.

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

Հավելված թիվ 2
թիվ «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸՀԱՇՁԲ-15/02»
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

գեոդեզիայի բնագավառում Սպիտակի տարածաշրջանի գեոդինամիկական պոլիգոնի ստեղծման աշխատանքների

h/h	Աշխատանքների անվանումը	Ֆինանսավորման գումարը 2015թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներից ըստ ամիսների, ընդ որում՝											
		փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը /հազ.դրամ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Գեոդեզիայի բնագավառում Սպիտակի տարածաշրջանի գեոդինամիկական պոլիգոնի ստեղծման աշխատանքներ	919 4	919 4	32707 2	32707 2	32707 2	66881 7	66881 7	66881 7	68965 4	68965 4	68965 4	68965 4

**գումարները ներկայացված են աճողական կարգով*

Պ ա տ վ ի ր ա տ ու
ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցեն ք.Երևան, Արշակունյաց 7
h/h 900013220042
ՀՀ ՖՆ գործադիր տնօրենություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի
ղեկավար _____ Վ.Հասրաթյան
/ստորագրություն/
Կ Տ

Կ ա տ ա ր ո ղ
«Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ
ք Երևան, Կոմիտաս 35/2
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/ճ
Հ/Հ 247120034787
ԷԿՀՀ 00113126
Գործադիր տնօրեն՝
_____ Վ Կարագյոզյան
(ստորագրություն) Կ.Տ.

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

Հավելված 3
N «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ ԲԸՀՀԱՇՁԲ 15/02»
ծածկագրով գնման պայմանագրի

Կատարող Պատվիրատու

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<< >> 2015թ.

Պայմանագրի անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝
Պայմանագրի համարը՝ *«ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸՀՀԱՇՁԲ-15/02»*
Պատվիրատուն՝ ի դեմս պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ և Կատարողը՝ ի դեմս ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն , հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Գնման առարկայի անվանումը	**Գնման առարկայի քանակական ցուցանիշը**	**Աշխատանքների կատարման ժամկետը**	**Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)**	**Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)**
Ամբողջը՝				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են·

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

Կ Տ

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

ստորագրություն

Կ Տ

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com